խս կը հաղորդեմ ձեզ: Ես յայտարարում եմ ձեզ, որ այն ամէնը, ինչ որ պիտի հաղորդեմ ձեզ, զգացում է Վրաստանի հանրապետութեան բոլոր քաղաքացիների կողմից: Այսպէս է մտածում ամբողջ Վրաստանը. մենք անկախութիւն յայտարարեցինք 1918 թ. մայիս 26-ին եւ, մինչեւ Դաշնակիցների մեզ մօտ գալը, զբաղուած էինք բացառապէս մեր նոր պետական կեանքի շինարարութեամբ: Մենք ոչ ոքի հետ չենք պատերազմել եւ ոչ մի տեղ թշնամի չունէինք: Մեր բարեկեցութեան միակ վտանգը բոլշեւիկներն էին, բայց մենք նրանց քշեցինք Սոչիի միւս կողմը, եւ մեր պետութիւնը ազատուեց այդ վտանգից: Կրկնում եմ բոլոր մեզ շրջապատողների հետ մենք ապրում էինք խաղաղ:

«Դաշնակիցների գալուց յետոյ պատկերը խիստ կերպով փոխուեց. մենք ամբողջ ժամանակ պատերազմում ենք: Նախ՝ Հայաստանի դաւադիր յարձակումը, յետոյ կամաւորականների յառաջխաղացումը եւ, վերջապէս, թիւրք-թաթարական հորդաների ներխուժումը մեր երկիրը Արտահանի կողմից դէպի Ախալցխա: Ես առանձնապէս հրաւիրում եմ ձեր ուշադրութիւնը վերջին փաստի վրայ: Վրաստանի կառավարութիւնը միշտ համարել է, որ Բաթումի եւ Արտահանի շրջանները գտնուում են բրիտանական զինուորական ուժերի անմիջական ազդեցութեան եւ կառավարութեան ներքոյ, եւ ես ենթադրում եմ, որ թիւրք բանակի ասկեարներն ու սպաները կը հեռացուին այդ հողամասերից անգլիական հրամանատարութեան կարգադրութեամբ: Կարսի շրջանի վերաբերմամբ մենք ենթադրում էինք եւ հիմք ունէինք դրա համար, որ նա օրինական հիմունքներով պիտի յանձնուի Հայաստանին: Մինչդեռ իմ յիշած տարածութեան վրայ կազմուել է նոր ինքնակոչ մի պետութիւն, որ բաց կերպով յայտարարում է, որ ինքը գտնուում է Անգլիայի անմիջական հովանաւորութեան տակ»:

Զօր. Ուօկկեր.— «Ես այդ մասին ոչինչ չեմ լսել»:

Ժորտանիա.— «Դուք վատ էք իրազեկ, զօրավար, բայց Վրաստանի կառավարութիւնն անվիճելի փաստաթուղթ ունի: Մենք ձեռք ձգեցինք այդ կառավարութեան պետ Աթաբէկովի շրջաբերականը, որի մէջ նա իր համախոհներին յայտնում է այն ամէնը, որ ես պատիւ ունեցայ այս րոպէիս հաղորդելու: Այդ ինքնակոչ կառավարութիւնը ստեղծել է կանոնաւոր զօրք, որի մէջ գտնուում են ասկեարներ եւ ծառայում են թէ՛ թիւրք եւ թէ՛ ռուս սպաներ. նա պատերազմ է վարում մեզ հետ, եւ նրա զօրքերը Արտահանից ներխուժեցին Ախալցխա, եւ ամենակարեւոր ու տխուր փաստն այն է, որ այդ ապստամբների (այլ կերպ ես չեմ կարող կոչել նրանց) բանակներում գտնուում էին երկու անգլիական սպաներ, որոնք անցել են այնտեղ Բաթումից՝ Աջարիայի վրայով: Մենք կարծում էինք միշտ, որ բրիտանական հրամանատարութիւնը իր կշիռ ունեցող խօսքով թոյլ չի տայ նրանց ներս խուժելու Վրաստանի հանրապետութեան սահմանները եւ այդ համոզման հիման վրայ մեր զօրքը չենք ուղարկել այնտեղ, բայց դուրս եկաւ, որ այդ այդպէս չէ, եւ մենք հարկադրուեցինք պարպել Ախալցխան եւ այս պահուս կանգնած ենք նրանից 25 վերստ հեռու:

«Հետեւանքները աչքի առջեւ են. Սոչիից դատ մենք ունինք մի նոր ճակատ եւս: Վրաստանի կառավարութիւնը համոզուած յայտարարում է ձեզ, թէ երկու ճակատների յառաջխաղացումներն էլ խիստ համաձայնեցուած են: Ամէն ինչ մտածուած ու կազմակերպուած է Բաթումում, եւ այս աղբիւրից ուղարկուել են բոլոր կարգադրութիւնները: Մեզ համար կատարելապէս ակնյայտնի է, եւ այդ բանում դուք չէք կարող կասկածել, որ երկու հարուածն էլ սկսուած են միաժամանակ, եւ այդ բանում կարեւորագոյն դեր են կատարել թիւրք գործակալները Բաթումում: Նրանց ազդեցութիւնը այնքան մեծ է, որ արդուինցիները մերժեցին ընդունել բրիտանական հրամանատարութեան ուղարկած շրջանապետին»:

Զօր. Ուօկկեր.— «Այդ ճիշդ չէ»:

Ժորտանիա.— «Մենք տեղեկութիւն ստացանք, որ արդուինցիները մերժել են ընդունել անգլիական ընդհանուր նահանգապետի նշանակած պաշտօնեային եւ յայտնել, որ իրենց համար շրջանի կառավարիչ կ'ուղարկէ Կարսի կառավարութիւնը»: